

Աւագ որսկանը սարին,  
էսօր հանդէս բաց կ'անի.  
Ա՛խ, երանի՛ք էն եարին՝  
Աւագութեանն արժանի:

★ ★ ★

### Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

— Լալուար սարից, գով սարից,  
Ո՞վ չի գալիս իր բախտին,  
Ո՞վ չի կապում էս ծառից  
Սիրոյ յուշերն Ալվարդին:

Ամէն գարուն ու աշուն,  
էս ծառի տակ, էս թումբին,  
Մենք ենք գալիս միշտ յիշում  
Սարի աղջիկ Ալվարդին:

Սէր է արել նա բինում,  
Սէր է արել կարօտով.  
Նա սիրել է շա՛տ գուլում,  
Նա ընկել է գընդակով:

### ՀԱՏՈՒԱԾ «ԵՂՆԻԿԻ ՓԵՐԻ» ԱՆՏԻՊ ՊՈԷՄԻՑ

### Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք

### Ն Ե Ռ Ը

Թուշում է տիտան Նեռը մանեման  
Արար աշխարհի ճամբով անսահման.  
Թեւթեւին տըւած մահին խաւարում,  
Մահին փառք տալով, մահ է արշաւում.  
Մահով ուռնացած՝ մահի թոյներով,  
Սրսկում է դաւեր հազար գոյներով.  
Թուշում է անգուսպ, անյաղթ, անվեհեր,  
Տանելով իր հետ արիւն ու աւեր.  
Ժանտ օծի նըման խայթում է երկրին.

Սրսկում է թոյնը ազատ մտքերին,  
Մտնում պալատներ, խուղեր գետնափոր,  
Հնչում ամէն տեղ միշտ կոռի շնփոր:  
Խառնելով իրար ծովեր, ովկիանոս,  
Սուզում է նաւեր անդունդն արիւնհոս,  
Եւ նըրա դիւթած մահն ու դաւերը  
Հասնում են երկրի բոլոր ծայրերը՝  
Արեւմուտք, Հարաւ, մինչեւ Արեւելք,  
Ամէն տեղ ազատ անում մուտք ու ելք.  
Անվերջ դաւերի, մահերի փորձով  
Անցնելով ամէն արեան հընոցով,  
Փնտռում է աւար ծովում, ցամաքում,  
Խեղդելով ամէն մի լոյս ակունքում.  
Եւ դեռ չաւարտած աւարը մէկի՝  
Հնչում է փողը նոր արշաւանքի,  
Եւ ամենուրեք կոռից անբաժան՝  
Թնդում է նըրա չար խինդը դաժան:

★ ★ ★

Ես կը չափեմ, կը ձեւեմ  
Բախտը ամէն աշխարհի,  
Ամենուրեք կ'արշաւեմ—  
Կամքն է այսպէ՛ս իմ՝ Նեռի՛:

Թնդանօթներն անբաժան  
Աստուածներն են ի՛մ շահի.  
Ծով ու ցամաք ատրուշան  
Միշտ ի՛մ կամքով կը վառուի:

Ես կը ջարդեմ դարբեղար  
Ըմբոստների խրոխը,  
Որ գըլորուի դարէ՛ դար  
Մեծ Նեռական անիւր:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, ի՛նչ լաւ եմ,  
Ամենուրեք կ'արշաւեմ.  
Նըրան կ'առնեմ աւարի,  
Միշտ էլ կ'երթամ պայքարի...

★ ★ ★

Եւ տաքերային ծանրը երկունքով  
Անցնում է շողը անհունի խորքով.

Այլ արեան գոյնով ետում, բրդընկում,  
Սար ու ձոր հազար գոյներով ներկում:

—Դո՛ւ, որ անկերջ դարերով  
Աւեր ու մահ ես ցանում,  
Այդ քո դաժան դաւերով  
Պիտի մարիս քո ընում:

Մե՛նք կ'աւերենք հիմնովին  
Քո ցընորքներն ապարդիւն,

Մե՛նք կ'աւերենք աշխարհին—  
Նո՛ր կեանք, նո՛ր սէր, խնդութիւն:

★ ★ ★

Եւ լեռն այլայլուած ծագող Արեւից՝  
Փարոււմ է ամուր խաւարի թեւից,  
Եւ բորբ բոցերից սարսում է, դողում,  
Խաւարը շաղկաւ յետ յետ է սողում:  
Երեւան Գ.Ա.ՀԱՆ ՄԻԲԱՔԱՅԱՆ

## ՏԻԿԻՆ ԳԱՆԼԵՌԻ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դրացուհի՛ Տիկին Գանլէս, վաթսունէն  
վաթսունըհինգ տարեկան փոքրիկ պառաւ  
մըն է, կոկիկ, մաքուր, առանց ձեւմակի և  
խնամքով սանտրուած շաղանակադոյն մա-  
ղերով, փոքրիկ շիւ աչքերով, սրտնք հա-  
խընարութեամբ ակնոցին երկու քովերէն  
երեսդ կը հոսոյն աւելի քան ապակիներուն  
մէջէն, ու հաճելի ժպիտ մը եւ իր դա-  
սակարգին համար ընտրուած շարժուձեւեր  
եւ խօսակցութեան սճեր ունի: Բայց իրեն  
հետ միայն առօրեայ քաղաքավարական  
ձեւակերպութիւններուն մէջ պէտք է մը-  
նալ եւ օգին երեւոյթներուն վրայ կար-  
ծիք փոխանակելէ անդին չանցնիլ: Եթէ  
գոթադղութիւնն ունենաս վայրկեան մը  
աւելի կանդ առնելու բակին մէջ կամ իր  
գետնայարկի պատուհաններուն առջեւ, ս-  
րանց ետին խաշոր սեղանի մը վրայ հակած  
կ'աշխատի ամբողջ օրը, այլ եւս օձիքդ  
գիւրութեամբ չես կրնար ազատել:

Տիկին Գանլէս արդուկող է, և իր ար-  
հեստակիցներուն պակասութիւնն ունի, շա-  
տախտ է: Բայց չկարծէք թէ կը սիրէ ուն

նիւթի վրայ խօսիլ. ո՛չ: Մէկ եւ միօրինակ  
նիւթ մը ունի. — իր գոթադղութիւններուն  
պատմութիւնը. եւ ի՞նչ պատմութիւն...:

Բարդ, անսպաս, անվերջանալի, թուա-  
կաններով հարուստ, իրաւագիտական, code  
pénalի յօդուածներով գիտուն, հօտարնե-  
րու, փաստաբաններու, դատաւորներու,  
Procureur de la Républiqueներու անուն-  
ներով լեցուն, ամբողջ շարք մը օրէնս-  
դէտներու, անցեալ եւ ներկայ, սրանց հետ  
Տիկին Գանլէս գործ ունեցած է տարիներէ  
ի վեր— եւ սրտնք ձեռք ձեռքի տուած են  
զինքը խաբելու, սնանկացնելու, իր ամու-  
սինք գերեզման իջեցնելու, իր տունը ձեռ-  
քէն առնելու, զինքը առանց նեցուկի, ա-  
ռանց օճախի ձգելու, եւ վերջապէս այսօր  
զինքը իր այդ տարիքին մէջ այս ծանր  
աշխատութեան դատապարտելու համար:

Այս հակայական պատմութեան մէ-  
ջէն, որ սրտայոյզ մանրամասնութիւններէ  
ալ գուրկ չէ, այս ըսած եղբակացութեանս  
հասնելու համար, մտքի ահագին ճիգի մը  
պէտք ունիս արդէն. բայց թէ ինչո՞ւ, ի՞նչ